

Մարիաննա ԵՓՐԵՄՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

ՍԱԿԴԻՐԻ ՏԱՐԲԵՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Սույն հոդվածում քննության են առնվում մակդիրի տարբեր մեկնաբանություններն արդի լեզվաբանության մեջ, պատմական անդրադարձ է կատարվում մակդիրի տեսությանը հնագույն հռետորների ու գրականագետների աշխատություններում, քննվում են մակդիրի և տրամաբանական որոշի տարբերակիչ առանձնահատկությունները, փորձ է արվում տարանջատել վերոնշյալ լեզվական երևույթները և որոշարկել նրանց սահմանները: Հետազոտության համար հիմք են ծառայել հայ, ռուս և իսպանացի հայտնի լեզվաբանների տեսակետները:

**Բանալի բառեր.** մակդիր, մակադրյալ, քերականական որոշիչ, գեղագիտական գործառույթ, տարբերակիչ հատկանիշ

Մակդիրը մեծ դեր ունի խոսքի պատկերավորման միջոցների շարքում՝ որպես հուզարտահայտչական և գեղագիտական արժեք հաղորդող, հեղինակի աշխարհայացքն ու բացառիկ մտածողությունը ներկայացնող, ուրույն բանաստեղծական մթնոլորտ կերտող միջոց:

Անշուշտ, այն գեղարվեստական ազդեցությունը, որ թողնում է մակդիրը մարդու գիտակցության վրա, անփոխարինելի է: Մակդիրներից գուրկ խոսքը, կարող ենք ասել՝ մերկ է և ոչ պատկերավոր: Այս հարցի շուրջ մի ակնառու օրինակով Վ. Պ. Մոսկվինն իր կարծիքն է հայտնում՝ մեջբերելով Մ. Վոլոշինի հայտնի բանաստեղծությունից մի քանի տող. “Гряды синеющих холмов // И груды белых облаков // На фоне мраморного неба...”: Լեզվաբանը պնդում է, որ եթե այս բանաստեղծական տողերից հանենք բոլոր գունային մակդիրները և հնչյունային կրկնաբանությունները (гряды – груды), ապա բանաստեղծությունը կվերածվի մի պարզ մակագրության (ջրանկարի անվանման)՝ “Холмы и облака на фоне неба”, այսինքն՝ այլևս գեղարվեստական տեքստ չի լինի /Москвин, 2001: 28/:

Մակդիրն իր լայն գործածությամբ չի զիջում այնպիսի այլաբանական միջոցների, ինչպիսիք են փոխաբերությունը կամ փոխանունությունը, քանի որ գեղարվեստական խոսքում արտահայտում է ոչ միայն հեղինակի աշխարհընկալումը, այլ նաև տվյալ լեզվով խոսող հանրության լեզվամտածողության բնորոշ գծեր: Ահա թե ինչու մակդիրը, որպես գեղարվեստական ստեղծագործության կարևորագույն տարր, բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա է եղել մի շարք լեզվաբանների և գրականագետների կողմից (Ա. Ն. Վեսելովսկի, Վ. Մ. Ժիրմունսկի, Բ. Տոմաշևսկի, Ֆ. Խլղաթյան, Է. Ջրբաշյան, Պ. Պոդոպյան, Ա. Մարության, Գ. Սոբեխանոև և այլք):

Չնայած բազմաթիվ հետազոտությունների, որոնք հաճախ բավականին իրարամերժ են թվում, դեռևս չի հաջողվել մակդիրի այնպիսի սահմանում տալ, որը կընդգրկի տվյալ երևույթի բոլոր ձևակառուցվածքային խնդիրների յուրա-

հատկությունները: Եվ սա բնական է, քանի որ տեսական գրականության մեջ մակդիրն ուսումնասիրվում ու դասակարգվում է զանազան սկզբունքներով, և այս դասակարգումները հազվադեպ են համընկնում: Մակդիրներին անդրադառնալիս Ջրբաշյանը եզրակացնում է. «Անչափ շատ են մակդիրի տեսակներն ըստ բովանդակության, և այստեղ որևէ բավարար դասակարգում կատարել հնարավոր չէ» /Ջրբաշյան, 1980: 232/:

Առաջին հայացքից որքան էլ պարզ թվա տվյալ երևույթը, ուսումնասիրողները տարակարծիք են նրա ձևաբովանդակային առանձնահատկությունների, շարահյուսական և գեղագիտական գործառույթների քննության հարցում /Веденский, 1904: 927/: Մակդիրը չափազանց բարդ և բազմաբովանդակ է, որպեսզի կադապարվի որևէ խիստ սահմանման մեջ:

Գոյություն ունի մակդիրի մեղ դասակարգում, որի մեջ մտնում են միայն ածականները և իրականացնում են խոսքը գունավորող, զարդարող գործառույթ ու լայն դասակարգում, որի մեջ ընդգրկվում են նաև մակբայները, գոյականները, դերբայները և բառակապակցությունները: Երկու ուղղություններին էլ հարող շատ հայտնի լեզվաբաններ կան. մեղ դասակարգման հետևորդներից կարելի է առանձնացնել Ա. Ն. Վեսելովսկուն, Ա. Պ. Եվգենևսկին, Վ. Մ. Ժիրմունսկուն, Վ. Վ. Կրասնյանսկիին, ինչպես նաև իսպանացի հայտնի լեզվաբաններ Ֆերնանդո Լասարո Կառետերին, Գ. Սոբելսանոյին, Ռ. Լենսին, քերականագետ Անդրես Բելյոյին, իսկ լայն դասակարգման հետևորդներից են Ի. Վ. Առնոլդը, Ի. Բ. Գոլուբը, Բ. Վ. Տոմաշևսկին և այլք:

Մեկ այլ խոչընդոտ է մակդիրի ուսումնասիրության դաշտում այն փաստը, որ որպես այլաբանության միջոց, այն գտնվում է գրականագիտության և լեզվաբանության սահմանագծին: Երկար ժամանակ պոեզիան գրականագետների ուսումնասիրության առարկա է եղել, ինչը բավականաչափ խոչընդոտել է մակդիրի լեզվաբանական համակողմանի քննությանը: Հարկ է համաձայնել Ռ. Յակոբսոնի հետ, ով նշում է. «Պոեզիան ուսումնասիրում է խոսքային կառույցներն այնքանով, որքանով արվեստաբանությունը՝ գեղանկարչության հիմնական կառույցները: Քանի որ խոսքային կառույցների համընդհանուր գիտակարգը լեզվաբանությունն է, պոեզիան կարելի է դիտարկել որպես լեզվաբանության բաղկացուցիչ մաս» /Якобсон, 1975/:

Պատմական անդրադարձ կատարելով մակդիրի տեսությանը դեռևս հնագույն ժամանակներում՝ հարկ է այն դիտարկել իր հետ համընթաց զարգացող այլ լեզվական երևույթների հետ: Ուշագրավ է, թե ինչպես է մակդիրը մեկնաբանվել, սահմանվել և բացատրվել քերականության և հռետորության մեջ տարբեր տեսաբանների կողմից, որոնց տեսությունների հիման վրա են զարգացել և կատարելագործվել մակդիրի քննության այսօրվա շատ հայեցակետեր:

Հռետորաբանությունն այն սահմանում է որպես այլաբերություն կամ ոճական միջոց, իսկ քերականությունը՝ ածական անվան տարատեսակ:

Արիստոտելը, մակդիրի շուրջ խոսելիս, նշում է չորս գործոն, որ ոճին սառնություն են հաղորդում՝ բաղադրյալ բառերը, հազվագյուտ, եզակի բա-

ները, մակդիրները և անհամապատասխան փոխաբերությունները /Аристотель, 2007: 273/: Մասնավորապես մակդիրներն այս շարքին դասվում են երբեմն ծավալուն կառուցվածք ունենալու, ինչպես նաև անհարկի և չափազանց հաճախ կիրառվելու պատճառով: Որպես օրինակ բերվում է *սպիտակ կաթ* արտահայտությունը, որը թեև պոեզիայում ընդունելի է, սակայն բացարձակ անպատեհ է խոսքում, հռետորական արհեստականություն է ստեղծում, փոխում է խոսքի բնական բնույթը և ոճին ինչ-որ օտար նրբերանգ հաղորդում: Այսպիսով, Արիստոտելը առաջ է քաշում մի քանի պահանջներ, որոնք հաշվի առնելով, չի կարելի կիրառել այնպիսի մակդիրներ, որ հակասեն համատեքստին (իրավիճակին), հարկ է խուսափել նաև անպատեհ մակդիրներից (*hielo frío*), ինչպես նաև քարացած արտահայտություններից (*hondo pesar, blanca nieve*): Անհրաժեշտ է չափավորել մակդիրների կիրառությունը, քանի որ «անչափավորությունն» այստեղ ավելի մեծ «մեղք» է և իր մեջ արատ է պարունակում, քան հասարակ (մակդիրից զուրկ) խոսքը, որը, համեմայն դեպք, ունի բարոյական արժեք /Аристотель, 2007: 275/:

Ճիշտ է, առանց մակդիրի ցանկացած բանաստեղծություն կամ արձակ ստեղծագործություն վերածվում է մի տեքստի՝ զուրկ զգացմունքայնությունից և քնարականությունից, սակայն հակառակ երևույթն էլ գերծանրաբեռնում է միտքը:

Հատկանշական է ռուս բանաստեղծ Օզերովի համեմատությունն անտեղի կիրառվող մակդիրների վերաբերյալ, որտեղ ասվում է. «... տեքստը որոշիչների տեղատարափի տակ կռթնում է այնպես, ինչպես խնձորենին է ծանրաբեռնվում պտուղների ծանրությունից ...» /Озеров, 1972: 371/:

Չնայած այս ամենին՝ պետք է նշել, որ բարձր գնահատանքի են արժանանում ճիշտ ընտրված, խոսքին գեղագիտական յուրահատկություն հաղորդող մակդիրները, որ սկզբնական շրջանում կատարում էին գեղարվեստական որոշիչ դեր, և մինչ օրս էլ, այդ ավանդույթին հետևելով, իսպանական լեզվաբանության մեջ մակդիրներն ու որոշիչները նույնացվում են. ցանկացած ածական համարվում է մակդիր:

Հնագույն ժամանակների շատ մտածողների կողմից ընդունվում են Արիստոտելի դիտարկումները մակդիրի շուրջ, իսկ արդեն փոխաբերությունների ուսումնասիրությունների ընթացքում առաջ է քաշվում մի նոր մոտեցում, որում մակդիրներն անվանվում են *ռիսկային փոխաբերությունները* հարթող, թեթևացնող այլաբերություններ: Շատ հեղինակներ երբեմն խուսափում են որոշ փոխաբերությունների կիրառումից, քանի որ դրանք կարող են բավականին հանդուգն և համարձակ թվալ: Կարելի է հիշատակել բոլորին հայտնի «*անլար քնար*» օրինակը, որտեղ եթե օգտագործվեր պարզապես քնար, փոխաբերությունը համարձակ կստացվեր, սակայն *անլար* մակդիրը մեղմացրել է տվյալ փոխաբերական պատկերը: Այս պարագայում մակդիրը թույլ է տալիս հստակեցնել փոխաբերական իմաստը և նրան հաղորդել իմաստային թափանցիկություն /Demetrius, 1927: 116/:

Եթե հռետորաբանության մեջ մակդիրը դիտարկվում է որպես զանազան ձևերի համակցություն՝ պարզ և բարդ ածականներ, կրկնակ ածականներ, կոչականի ու բացահայտչի լրացում, ապա քերականությունը, լինելով նորմերի ամբողջություն, մակդիր է անվանում որոշակի քերականական ձևով, շարահյուսական որոշակի գործառույթով ու որոշակի իմաստային նշանակությամբ և արժեքով օժտված, ինչպես նաև ոճական որոշակի նպատակով կիրառվող բառերը /Sobejano, 1970: 51/:

Ինչպես նշվեց, իսպանական լեզվաբանության մեջ ըստ խոսքիմասային պատկանելության ընդունված է մակդիրների շարքին դասել միայն ածականները: Ավելին, ակնառու իսպանացի լեզվաբաններ Անդրես Բելյոն, Լենսը առարկան մատնանշող մակադրյալը բնորոշող ածական-մակդիրները ստորաբաժանում են բացատրական ածականների, որ բացատրում են տվյալ մակադրյալի բովանդակությունը և անվանում վերջինիս ամբողջական դասը բնորոշող հատկանիշ և մասնավորեցնող ածականների, որ սահմանափակում են գոյականի իմաստը և ուժգնացնում նրա հատկանիշի ճիշտ և դիպուկ ընկալումը /Bello, Cuervo, 1948: 105; Lenz, 1925: 156/:

Իսպաներենում նկատվում է այն միտումը, որ միայն բացատրական ածականներով արտահայտված հատկանիշն է համարվում մակդիր և նախադասության մեջ հանդես գալիս առաջադաս դիրքով (*las mansas ovejas, la cándida paloma, la blanca nieve*), իսկ մասնավորեցնող ածականով արտահայտվածը, որ հիմնականում ետադաս կիրառություն ունի, սովորաբար քերականական որոշչի գործառույթ է կատարում (*las ovejas blancas, la madera blanca, los animales mansos*) /Sobejano, 1970: 68/:

Ընդունված է համարել, որ իսպաներենում ածականը համարյա միշտ ետադաս է, ուստի, նրա առաջադաս կիրառությամբ հեղինակը միտումնավոր փորձում է ուշադրություն հրավիրել մակադրյալի որևէ կոնկրետ հատկանիշի վրա՝ ընդգծելով մակդիրի ոճական կարևորագույն գործառույթներից մեկը՝ խոսքը զարդարելու գործառույթը: Այս ձևով հեղինակը ցույց է տալիս իր սուբյեկտիվ նախընտրությունը տվյալ մակդիրի վերաբերյալ, ինչպես նաև արժևորում է այն: Բայց այս կանոնը միշտ չէ, որ գործում է, հատկապես՝ պոեզիայում /Gili y Gaya, 1943: 164/:

Ուստի, մակադրյալի համեմատությամբ մակդիրի դիրքը ձևական բնույթ ունի, և իսպաներենում, ինչպես և հայերենում առանձնացվում են թե՛ նախադաս և թե՛ ետադաս մակդիրներ:

Քերականության տեսանկյունից մակդիրի բազմաթիվ մեկնաբանությունների մեջ առանձնահատուկ կարևորվում է Լասարո Կառետերի տերմինաբանական հեղինակավոր բառարանում տեղ գտած մակդիրի սահմանումը. «Որակական ածական, որը որպես գոյական անվանը կցվող բառ նրան ինչ-որ հատկանիշ է հաղորդում կամ ընդգծում այն՝ չփոփոխելով նրա ձևաձևալային և ընկալողական ամբողջությունը» /Carreter, 1968: 74/:

Հայ և ռուս լեզվաբանության մեջ *մակդիր* եզրույթի շուրջ ծավալվող տեսակետները բավականին սերտորեն փոխկապակցված են: Որոշ առանձնահատկություններ ի հայտ են գալիս մակդիրի և տրամաբանական որոշչի

տարբերակման, կառուցվածքափոփոխության, շարահյուսական մի շարք յուրահատկությունների, ինչպես նաև մակդիրի տեսակների դասակարգման մեջ:

Այս առումով հայ լեզվաբանության մեջ տրվում են մակդիրի շատ բնորոշումներ, թեև մակդիրի էական տարբերակիչ հատկանիշներն ավելի ամփոփ ձևով ներկայացվել են Լ. Եզեկյանի կողմից առաջադրված սահմանման մեջ. «Մակդիրը լեզվի պատկերավորման միջոց է, այլաբերության տեսակ, ոճական այնպիսի հնարանք, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ, տրամաբանական տարբերակիչ հատկանիշը, այլ նրա գեղարվեստական, պատկերավոր, գեղագիտական բնութագրությունը» /Եզեկյան, 2006: 334/:

Մակդիրը հաճախ նաև պատկերավոր կամ գեղարվեստական որոշիչ է համարվում, սակայն այստեղ հատկանշական է այն հանգամանքը, որ մակդիրը լրացնում է ոչ միայն գոյականին (ծով աչքեր, հեզաճկուն պար, քնքուշ լարեր, aplomo inmenso, mármol costroso, cara absorta), այլ նաև բայերին՝ արտահայտելով գործողության հատկանիշ (մեղմ շնչալ, դառը ժպտալ):

Անկախ մակդիրի նեղ ու լայն դասակարգումից՝ այն միշտ էլ բանավեճերի առարկա է եղել: Եվ չնայած հայ լեզվաբանության մեջ մակդիրների շարքին են դասվում նաև գործողությունը բնութագրող բառերը, սակայն առաջ են քաշվել տարբեր կարծիքներ դրանք սահմանազատելու ուղղությամբ, նույնիսկ առաջադրվել է նոր եզրույթային կապակցություն՝ գեղարվեստական մակադրություններ, որի տակ նկատի են առնվում միայն գործողությունը բնութագրող բառերը և դրանցից առանձնացվում են մակդիրները /Մարության 2000: 139; Խլղաթյան, 2000: 115/:

Ոճաբանական գրականության մեջ ընդունված է նաև մակդիրները բաժանել փոխաբերականների (արնահամ բառ, փափուկ ժպիտ) և ոչ փոխաբերականների (դալուկ դեմք, ոլործուն սորուս): Բնականաբար, առավել պատկերավոր և մեծ հուզարտահայտչականությամբ առանձնանում են փոխաբերականները:

Ըստ շատ լեզվաբանների կարծիքի, մակդիրների առաջնային և հիմնական հատկանիշն այն է, որ նրանք ունեն փոխաբերական իմաստ, և, թերևս, հենց դրանով են տարբերվում քերականական որոշիչից: Մակդիրը բառի փոխաբերական իմաստը կերտող միակ և հիմնական հատկանիշն է, ինչպես առարկաների, երևույթների, այնպես էլ գործողության հատկանիշները գեղագիտորեն բնութագրելիս:

Քանակային տեսակետից անկանոն արտահայտված մակդիրները միանշանակ գերազանցում են մյուս խոսքի մասերին: Չնայած այն հանգամանքին, որ հիմնականում անկանոններն են կոչված դառնալու մակդիր, գոյականով արտահայտվածներն առավել պատկերավոր ու հնչեղ են: Եթե անկանոն կամ բայը մեկ հատկանիշով է բնութագրում առարկան, ապա գոյականը՝ երբեմն հատկանիշների մի ամբողջ խմբով:

Օր՝ Պտույտ է գալիս ծաղիկ տիրուհին,

Անցնում է, հսկում սեղաններն ամեն... (Հովհ. Թումանյան)

Սեղան բարձրացավ և բազուկները տարածելով՝ յուր գիրկն առավ թագուհու գեղեցիկ գլուխը և սկսեց համբույրներով ծածկել նրա շուշան ճակատը: (Մուրացան)

Այս օրինակներում *ծաղիկ* և *շուշան* գոյականները, հանդես գալով որպես մակդիր, բովանդակությամբ մեկից ավելի հատկանիշների ամբողջություն են, և մեր մեջ առաջացնում են քնքշության, թարմության, գեղեցկության, նրբության և նման կարգի գաղափարների զուգորդումներ /Պողոսյան, 1990: 45/:

Նմանապես Կամիլո Խոսե Սելայի «Փեթակը» ստեղծագործության մեջ առաջին իսկ տողերից հանդիպում ենք մակդիրների մի շարք օրինակներ, որտեղ մակադրյալի հատկանիշը արտահայտված է *նախդիր + գոյական* կառույցով:

Aquí yacen los restos mortales de la señorita Esperanza Redondo, muerta en *la flor de la juventud*. (C. J. Cela, La colmena, p. 10)

Miguel, aunque tenía *un corazón de oro*, le respondió: “Me es imposible, amigo Navarrete; su hijo tiene que expiar sus culpas en el garrote”. (C. J. Cela, La colmena, p. 9)

La madre la miraba *con una sonrisa de conformidad* y le decía que claro que, bien mirado, tenía razón. (C. J. Cela, La colmena, p. 10)

... el aire se hace *más espeso, más gris*, aunque de cuando en cuando, lo cruce, como un relámpago, un aliento más tibio que no se sabe de donde viene, un aliento *lleno de esperanza* que abre, por unos segundos, un agujerito en cada espíritu... (C. J. Cela, La colmena, p. 50)

Տվյալ օրինակներում՝ *la flor de la juventud* և *un corazón de oro*, որ թարգմանվում են հայերեն որպես *ծաղիկ հասակ* և *նույն սիրտ*, *ծաղիկ* մակդիրն իր մեջ ներառում է նրբության, անարատության, փոքրության, երիտասարդության գաղափարների, իսկ *նույն* մակդիրը՝ բարության, ազնվության, առատաձեռնության զուգորդումներ:

Հաջորդաբար, երրորդ օրինակում հանդիպում ենք *con una sonrisa de conformidad* արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է *համաձայնության ժպիտով* և, բնականաբար, նշված մակդիրը, համաձայնության գաղափարն արտահայտելով, *ժպիտ* գոյականին կհաղորդի մի շարք զուգորդումներ՝ գոհունակություն, կարծիքների համընկնում, պայմանավորվածություն, ինչպես նաև ոչ բացահայտ ակնարկ (ժպիտի միջոցով): Այս օրինակը մակդիրի խոսքային և ոչ խոսքային դրսևորման հիանալի նմուշ է, քանզի մակդիրային պատկերը ամբողջական է դարձնում համաձայնության ժպիտի տակ թաքնված դեմքի արտահայտությունը:

Եթե նախորդ երեք օրինակներում ներկայացված էին *նախդիր + գոյական* կառույցով արտահայտված մակդիրային կապակցություններ, ապա վերջին օրինակում ունենք մի ամբողջական տեսարանի նկարագրություն՝ ածականական մակդիրով արտահայտված (*aire más espeso, más gris* - ավելի խիտ ու գորշ օդ) կապակցություններով, որն ընդմիջվում է համեմատության շարքով՝ *lo (el aire) cruce, como un relámpago, un aliento más tibio (օդը կայ-*

ծակի նման ճեղքում է գաղջ քամին) և պատկերն ամփոփվում է իր ուրույն գործառույթով աչքի ընկնող գոյականական մակդիրով (*un aliento lleno de esperanza - հուսով քամի*): Պատահական չէ, որ գորշ ու տխուր իրականության այդ նկարագրությունը հեղինակն ավարտում է վերոնշյալ մակդիր-պատկերով՝ փորձելով այդ նույն իրականությանը լավատեսական երանգներ հաղորդել:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մակդիրի և քերականական որոշի տարանջատման խնդրին, առանց որի անհնար է կատարել մակդիրի համապարփակ ուսումնասիրություն: Հարկ է նշել, որ վերոնշյալ լեզվական երևույթների հետ կապված տարբերակում են տրամաբանական և գեղարվեստական բնորոշումներ /Ջրբաշյան, 1980: 220/: Տրամաբանական բնորոշումը ցույց է տալիս տվյալ երևույթի տարբերակիչ հատկանիշը, առանձնացնում է այն իր նմաններից: Այնինչ գեղարվեստական բնորոշումը (մակդիրը) չի հակադրում տվյալ առարկան մի ուրիշին, այլ ցույց է տալիս այս կամ այն հատկանիշը իր պատկերավոր դրսևորմամբ և արտահայտում է հուզական վերաբերմունք: Միևնույն բառը տարբեր նախադասություններում կարող է հանդես գալ որպես որոշիչ կամ մակդիր, սակայն բոլոր որոշիչները չէ, որ մակդիր են, և ոչ էլ բոլոր մակդիրները՝ որոշիչներ:

Այս երևույթի ակնհայտ օրինակներ են Կամիլո Խոսե Սելայի «Փեթակը» վեպում գործածված *un chico muerto, una conversaci3n muerta* և *una hora muerta* արտահայտությունները, որոնք բառացիորեն նշանակում են *մահացած տղա, մեռած խոսակցություն* և *մեռած ժամ*: Տվյալ օրինակներում, որոնք կազմված են միևնույն *մահացած, մեռած* հարակատար դերբայով, մենք ունենք տրամաբանական որոշիչ կիրառություն *մահացած տղա* արտահայտության մեջ, որտեղ *մահացած* բառը պարզապես ցույց է տալիս տղայի վիճակը: Մյուս կողմից, *մեռած խոսակցություն* և *մեռած ժամ* արտահայտությունների մեջ ակնհայտ է մակդիրի, մասնավորապես՝ փոխաբերական մակդիրի կիրառությունը: Այստեղ *մեռած* դերբայն արդեն հանդես է գալիս փոխաբերական իմաստով և իր մակադրյալներին հաղորդում է նոր իմաստային նրբերանգներ, ինչպես նաև ներկայացնում է հեղինակի բացասական, հեզմական գնահատականը տվյալ երևույթների հանդեպ:

Լեզվաբանության մեջ մակդիրի և քերականական որոշի սահմանագատման շուրջ տարակարծությունները շատ են: Մի շարք հայտնի ռուս լեզվաբաններ անդրադարձել են այդ խնդրին՝ տալով երբեմն վիճահարույց, բայց շատ հիմնավոր փաստարկներ: Որոշ լեզվաբանների կողմից հաճախ նույնացվել են այս եզրույթները, ինչպես օրինակ, Տոմաշևսկու կողմից քննված *красная роза* կամ *синие глаза* արտահայտությունները, որտեղ կարելի է դիտարկել և՛ մակդիր, և՛ որոշիչ: Իր տեսակետը հեղինակը բացատրում է հետևյալ ձևով. եթե *կարմիր* ածականով փորձ է արվում առանձնացնել տվյալ վարդը որպես վարդի յուրահատուկ տեսակ, ապա գործ ունենք տրամաբանական որոշիչի հետ, իսկ եթե նշված ածականով ընդգծվում է վարդի հենց կարմիր լինելու փաստը, ապա խոսքը գնում է մակդիրի մասին /Томашевский,

1999: 37/: Մի կողմից՝ Տոմաշևսկին կարևորում է մակդիրի՝ թարմություն, տրամադրություն, հույզեր, զգացմունքներ և անսպասելիություն հաղորդելու կարողությունը, մյուս կողմից՝ ընդգծում, որ շատ դեպքերում մակդիր – որոշիչ սահմանը հստակ չէ, հաճախ նույնացվում է:

Ուշագրավ է Վ. Մ. Ժիրմունսկու տեսակետն այս խնդրի շուրջ: Տեսաբանն անդրադառնում է մակդիրին լայն և նեղ իմաստով՝ առաջին դասակարգման մեջ ընդգրկելով ցանկացած որոշիչ, որ հասկացության մեջ ընդգծում է էական հատկանիշը, իսկ նեղ իմաստով՝ նոր հատկանիշ չի ներմուծում, այլ կրկնում կամ առաջին պլան է բերում առարկայի այն բնորոշումը, որն արդեն այս կամ այն չափով կա բառում և անհրաժեշտ է առանձնացնել միայն տվյալ պարագայում /Жирмунский, 1977: 355-361/:

Մի շարք լեզվաբաններ ու գրականագետներ մեծ ընդհանրություններ են տեսնում այս երկու երևույթների մեջ: Շատ ուսումնասիրություններում ընդգծվում է այն հանգամանքը, որ մակդիրը նոր հատկանիշ է ավելացնում առարկայի բնորոշման մեջ, բայց անդրադարձ չի կատարվում, թե այդ նոր հատկանիշը որ իրավիճակում կարող է համարվել այդպիսին: Առավել հատկանշական է Պավլուկի մոտեցումը այս խնդրին, որը գտնում է, որ մակդիրը առարկայի, անձի, երևույթի, գործընթացի, իրավիճակի գեղարվեստական որոշիչն է (որոշիչ՝ գեղագիտական գործառույթով), որ առանձնացնում, ընդգծում և ուժգնացնում է հեղինակի կողմից էական համարվող հատկանիշը, որը կարող է կրկնել կամ նորացնել բնորոշվող բառի նշանակությունը, առարկաների մի ամբողջ խմբի համար լինել տիպիկ և անփոխարինելի, ինչպես նաև լինել կոնկրետ առարկայի՝ միայն իրեն բնորոշող հատկանիշ, ստեղծել մակրո և միկրոպատկերներ՝ նրան հաղորդելով գեղագիտական փայլ, իր մեջ պարփակել հեղինակի կողմից չարտահայտած մտքեր և գնահատական, ստեղծագործության մեջ ապահովել տրամադրություն՝ ուշադրություն հրավիրելով ընդունողի մտավոր, հուզական և գեղագիտական ընկալման գործընթացի վրա /Павлюк, 2007: 20/: Այս սահմանումն առավել ընդգրկում և ամբողջական է, քանի որ այն անդրադառնում է մակդիրի շատ կարևոր գործառական առանձնահատկություններին, ցույց է տալիս նրա եզակի բնույթը՝ որպես գեղարվեստական լեզվի համապարփակ միջոց՝ միաժամանակ ընդգծելով այն փաստը, որ մակդիրի և որոշիչ սահմաններն այնքան էլ խիստ տարբերակված չեն: Կարող ենք եզրակացնել նաև, որ գեղարվեստական-գեղագիտական համատեքստում յուրաքանչյուր որոշիչ կարող է դիտարկվել որպես մակդիր:

Ստորև ամփոփ ներկայացնենք մակդիրի և քերականական որոշիչ տարանջատման հարցի շուրջ մի շարք ուսումնասիրությունների արդյունքները՝ հիմք ընդունելով հայտնի լեզվաբանների տեսակետները (Օ. Ս. Ախմանովա, Վ. Մ. Ժիրմունսկի, Բ.Վ. Տոմաշևսկի, Ա.Ա. Պոտեբնյա, Պ. Պողոսյան, Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան):

1. Քերականական որոշիչը արտացոլում է մակադրյալի այնպիսի հատկանիշ, որ վերցված է օբյեկտիվ իրականությունից, չի ենթադրում



սուբյեկտիվ գնահատական, չեզոք է: Մինչդեռ մակդիրն արտահայտում է սուբյեկտիվություն, ուշադրություն է հրավիրում այնպիսի հատկանիշների վրա, որոնք հեղինակի հուզական, ինչպես նաև ավելի խորքային վերաբերմունքն ու գնահատականն են արտահայտում: Օ. Ախմանովայի լեզվաբանական տերմինների բառարանում մակդիրը բնորոշվում է որպես որոշիչ այնպիսի տարատեսակ, որն օժտված է հուզարտահայտչական և այլաբերական երանգներով, որով և տարբերվում է սովորական որոշիչից /Ахманова, 1966: 72/:

2. Մակդիր-մակադրյալներն ավելի ազատ կապակցություններ են, ինքնատիպ և անսպասելի, իսկ որոշիչ-որոշյալները կայուն են, ինչպես քարացած արտահայտությունները:
3. Մակդիրի և տրամաբանական որոշիչ տարբերությունը նախ և առաջ դրսևորվում է գործառական ոլորտում՝ ցույց տալով, որ որոշիչները սահմանափակում են, մինչդեռ մակդիրներն առանձնացնելով ուժգնացնում են տվյալ առարկայի որևէ հատկանշական կողմ:
4. Մակդիրներն ավելի հաճախ կիրառվում են գեղարվեստական ոճում, իսկ տրամաբանական որոշիչները՝ գործնական և գիտական ոլորտներում:
5. Ճանաչողական տեսանկյունից քերականական որոշիչները բնորոշվող բառի նոր հատկանիշն են արտահայտում. նեղացնում են բառի ծավալային կողմը ու լայնացնում բովանդակայինը, որևէ նոր տեղեկություն են տալիս նրա մասին, մինչդեռ մակդիրը ուժգնացնում և ընդգծում է բնորոշվող առարկայի մեջ արդեն գոյություն ունեցող որևէ տիպիկ հատկանիշ՝ չփոփոխելով նրա ծավալային և բովանդակային ամբողջությունը:
6. Սովորական որոշիչի հետ ունեցած մակդիրի հիմնական տարբերություններից է վերջինիս գեղագիտական հագեցվածությունը:

Այսպիսով, դեռևս չկա ոճական այս հնարի վերաբերյալ համընդհանուր ճանաչում գտած որևէ սահմանում: Այն չափազանց բազմաբովանդակ է, ուսումնասիրվում է տարբեր գիտակարգերի կողմից և այդ պատճառով շատ բարդ է գտնել մի սահմանում, որ պարփակի իր մեջ մակդիրի թե՛ կառուցվածքափմաստային, թե՛ գործառական և թե՛ շարահյուսական բոլոր յուրահատկությունները: Վիճելի է նաև մակդիրի և որոշիչ՝ որպես լեզվական առանձին երևույթներ դիտարկելու խնդիրը: Թերևս դրանց հիմնական ու կարևորագույն տարբերությունը մակդիրի գեղագիտական հագեցվածությունն է, որից գուրկ է քերականական որոշիչը: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշեցինք, որոշ դասակարգումների շնորհիվ որոշարկվում են դրանց սահմանները, սակայն չենք կարող դիտարկել այս երևույթներն ամբողջությամբ առանձին, քանի որ մի շարք հատկանիշներով նրանք շատ նման են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եզեկյան Լ. Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2006:
2. Մարության Ա. Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000:
3. Խղաթյան Ֆ. Հ. Ոճաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2000:
4. Պողոսյան Պ.Մ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1990:
5. Ջրբաշյան Էդ.Մ. Գրականագիտության տեսություն, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980:
6. Аристотель. Поэтика. Риторика. Москва: Издательский Дом «Азбука-классика», 2007.
7. Арнольд И.В. Стилистика современного английского языка (Стилистика декодирования). Ленинград: Просвещение, 1973.
8. Ахманова О.С. Словарь лингвистических терминов. Москва: Советская Энциклопедия, 1966.
9. Веденский Б.А. Энциклопедический словарь. Москва: Советская Энциклопедия, 1964.
10. Голуб И.Б. Стилистика русского языка. Москва: Издательство «Айрис-Пресс», 2008.
11. Евгеньева А. П. Очерки по языку русской устной поэзии в записях XVII-XX вв. Москва: Издательство Академии наук СССР, 1963.
12. Жирмунский В. М. Теория литературы. Поэтика. Стилистика. Избранные труды. Москва: Наука, 1977.
13. Краснянский В.В. Сложные эпитеты русской литературной речи. Орехово-Зуево: Издательство Орехово-Зуевского пед. ин-та, 1993.
14. Москвин В. П. Эпитет в художественной речи // *Русская речь*, 2001, № 4.
15. Озеров Л. А. Мастерство и волшебство. Москва: Советский писатель, 1972.
16. Павшук А. В. Языковая природа и функции эпитета в художественном тексте. Автореф. дисс. ... канд. филол. наук. Москва, 2007.
17. Потебня А. А. Из записок по теории словесности. Поэзия и проза. Тропы и фигуры. Харьков: Изд. Харьковского университета, 1905.
18. Томашевский Б. В. Теория литературы. Поэтика. Москва: Аспект Пресс, 1999.
19. Якобсон Р. О. Лингвистика и поэтика // Электронный ресурс: <http://www.Philology.ru/linguistics1/Jacobson-75.htm>.
20. Bello A., Cuervo R. G. Gramática de la lengua castellana. Buenos Aires: Sopena, 1948.
21. Carreter F. L Diccionario de términos filológicos. Madrid: Gredos (III ed. corregida), 1968.

22. Cela J. C. La colmena. Barcelona: Noguer, 1963.
23. Demetrius. On style (With an engb. translation by W. Rhys Roberts). London: Harvard University Press, 1927.
24. Gili y Gaya S. Curso superior de sintaxis española. México: Minerva, 1943.
25. Lenz R. La oración y sus partes. Madrid: Publicaciones de la revista de filología española (II ed.), 1925.
26. Sobejano G. El epíteto en la lírica española. Madrid: Gredos (II ed.), 1970.

**М. ЕПРЕМЯН – О различных интерпретациях эпитета.** – В данной статье рассмотрены различные интерпретации эпитета в современной лингвистике, представлен исторический обзор теории эпитета в работах древних ораторов и литературоведов. Выявляются специфические отличия эпитета и грамматического определения, на основе которых делается попытка разделения вышеупомянутых языковых явлений и определения их границ. Основой данного исследования послужили точки зрения известных армянских, русских и испанских лингвистов.

**Ключевые слова:** эпитет, объект эпитетации, грамматическое определение, эстетическая функция, дифференциальное свойство

**М. YEPREMYAN – On Some Interpretations of Epithet.** – The present paper studies different interpretations of epithet in modern linguistics. Historical reference is made to the theories of epithet in the works of some ancient rhetoricians and of literary critics. The paper also examines the distinctive features between epithet and grammatical attribute with an attempt to distinguish the two linguistic phenomena and to determine the boundaries between them. The theoretical basis for the paper is provided by prominent Armenian, Russian and Spanish linguists in the field.

**Key words:** epithet, object of epithet, grammatical attribute, esthetic function, distinctive features